

2010

15

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ,
ՄԻԱՑԵՔ.

A2
6/2

Վ. Ի. ԼԵՆԻՆ

**ԴՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ՀԻՆԳ ՏԱՐԻՆ**

ՅԵՎ.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ՀՈՒԱՆԿԱՐՆԵՐԸ

5204 2254

3K23
12-95

0 1 JUN 2005

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ,
ՄԻԱՑԵՔ.

14 NOV 2000

Չ(47)
Ը-36

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՅԿԶ սյ.
Ը-95

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՋԵՂԱՓՈՒՊԻԹՅԱՆ
ՅԻՆԳ ՏԱՐԻՆ

5204 2204



ՎՐԱՑԿՈՒՍՏՐԱՏ

ԹԻՔԼԻՍ - 1933

2010

11 SEP 2013

Պատ. խմբագիր՝ ՅՆ. ԱՄԱՏՈՒՆԻ

Թարգմանիչներ՝	}	Ն Ո Ր Ա Յ Ր
		Կ. ԱՂԱՐԱՔԱՆ
		Ա. ՀՈԳԻՉԱՆՅԱՆ

Տեխն. խմբագիր Գ. ԲԱՐՈՒՐՅԱՆ

Դրավիտի լիազոր № a—5.

Հանձմ. տպագր. 11/XI

Ստորագր. տպագր. 21/XI

Թղթի ստանդ. ձևը—72X110

Տիրաժ 3000

Գրատվեր № 3305:



796
41

Ա. Յ. Մյանսկիյանի անվ. Կարմրադրոշ տպարան
Կրատ. „Չարյա վաստիկա“-ի

ՌՈՒՍՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԹՈՒԹՅԱՆ 5 ՏԱՐԻՆ ՅԵՎ ՀՈՒՐԹՈՒՐ ՀՈՒՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԹՈՒԹՅԱՆ ՀՆՈՒՆԿԱՐՆԵՐԸ

Զեկուցում Կոմունիստական Ինտերնացիոնալի
IV կոնգրեսում, 1922 թ. նոյեմբերի 13-ին.

Ընկերներ, հոետորները ցանկում յես համարվում եմ գլխավոր գեկուցող, բայց դուք կհասկանաք, վոր իմ յերկարատև հիվանդությունից հետո յես չեմ կարող մեծ գեկուցում տալ: Յես կարող եմ միայն կարեվոր հարցերի ներածություն տալ: Իմ նյութը շատ սահմանափակ է լինելու: «Ռուսաստանի հեղափոխության հինգ տարին ու համաշխարհային հեղափոխության հեռանկարները» թեման շատ ընդարձակ է ու մեծ, այնպես վոր մի հոետոր, ընդհանրապես, չի կարող այս թեման սպառել մի ճառում: Ուստի յես հանձրն եմ առնում այս թեմայի մի փոքրիկ մասը,—այն է՝ տնտեսական քաղաքականության հարցը: Յես գիտամաճը եմ վերցնում այս փոքրիկ մասը միայն, վորպեսզի ձեզ ծանոթացնեմ այժմյան ամենակարևոր այս հարցի հետ, ամենակարևոր, համենայն դեպս, ինձ համար, վորովհետև այժմ յես աշխատում եմ այս հարցի վրա:

Այսպես, ուրեմն, յես խոսելու յեմ այն մասին, թե ինչպես մենք սկսեցինք նոր տնտեսական քաղաքականությունը և այս քաղաքականության ողնությամբ ինչ հետևանքների հասանք: Յեթե յես սահմանափակվեմ այս հարցով, ապա հավանորեն կկարողանամ մի ընդհանուր տեսություն անել և մի ընդհանուր պատկերացում տալ ավյալ հարցի մասին:

Յեթե սկսենք այն բանից, թե ինչպես հասանք նոր տնտեսական քաղաքականություն, ապա յես պետք է դիմեմ մի հողավածի, վորը գրել եմ 1918 թվականին*)։ 1918 թվի սկզբին հակիրճ վիճաբանություն մեջ յես շոշափել եմ հենց այն հարցը, թե մենք ինչ դիրք պետք է բռնենք պետական կապիտալիզմի վերաբերմամբ։ Այն ժամանակ յես գրել եմ.

«Պետական կապիտալիզմը մի քայլ կլինեն դեպի առաջ մեր խորհրդային հանրապետության գործերի այժմյան (այսինքն այն ժամանակվա) դրություն հանդեպ։ Յեթե, որինակի համար, կես տարի հետո մեզնում հաստատվեր պետական կապիտալիզմ, ապա այս կլինենր վիթխարի հաջողություն և ամենավստահելի յերաշխիքն այն բանի, վոր մի տարուց հետո մեզնում վերջնականապես կամրապնդվի և անհաղթելի կդառնա սոցիալիզմը»։

Այս ասված է, իհարկե, այն ժամանակ, յերբ մենք ավելի հիմար եյինք, քան այժմ, բայց այնքան էլ հիմար չեյինք, վոր չկարողանայինք այսպիսի հարցերը քննել։

Այսպիսով, 1918 թվականին՝ յես այն կարծիքին եյի, վոր խորհրդային հանրապետության այն ժամանակվա տնտեսական կացություն համեմատությամբ պետական կապիտալիզմը մի քայլ եր դեպի առաջ։ Այս շատ տարրերնակ ու թերևս նույնիսկ անհեթեթ է հնչում, վորովհետև այն ժամանակ էլ արդեն մեր հան-

րապետությունը սոցիալիստական հանրապետություն էր. այն ժամանակ էր հենց, վոր մենք յուրաքանչյուր որ մեծագույն փութկոտությամբ, հավանորեն ավելորդ փութկոտությամբ, սկսում էյինք զանազան տնտեսական միջոցառումներ, վորոնց այլ անուն չի կարելի տալ, քան սոցիալիստական անունը։ Յեվ այնուամենայնիվ յես այն ժամանակ էլ յենթադրում եյի, վոր խորհրդային հանրապետության այն ժամանակվա տնտեսական կացության համեմատությամբ պետական կապիտալիզմը մի քայլ է դեպի առաջ։ Յեվ ապա յես այս միտքը լուսաբանեցի նրանով, վոր պարզապես թվեցի Ռուսաստանի տնտեսակարգի հիմնական տարրերը։ Հստիս՝ այս տարրերը հետևյալներն են. 1) Գյուղական տնտեսության նահապետական, այսինքն՝ ամենանախնական ձևը. 2) Մանր ապրանքային արտադրությունը (սրան է վերաբերում նաև հացահատիկ վաճառող գյուղացիություն մեծամասնությունը). 3) Մասնավոր կապիտալիզմը. 4) Պետական կապիտալիզմն ու 5) Սոցիալիզմը։ Տնտեսական այս բոլոր տարրերը ներկայացված եյին այն ժամանակվա Ռուսաստանում։ Յես այն ժամանակ ինձ նպատակ դրի պարզել այն խնդիրը, թե ինչ հարաբերություն ունեն միմյանց նկատմամբ այս տարրերը, և արդյոք այս վոչ-սոցիալիստական տարրերից մեկը, այն է՝ պետական կապիտալիզմը չպետք է ավելի բարձր գնահատել, քան սոցիալիզմը։ Յես կրկնում եմ, բոլորին խիստ տարրերնակ է թվում այս, վոր վոչ-սոցիալիստական տարրը սոցիալիզմից ավելի բարձր է գնահատվում, ավելի բարձր է համարվում մի հանրապետության մեջ, վորն իրեն հայտարարել է սոցիալիստական։ Բայց այդ բանը հասկանալի կդառնա, յերբ

*) Տես «Ձախ» յերեխայություն և մանր-բուրժուականություն մասին՝ հողավածը. յերկերի հատոր XXII, ռուս. հրատ. էջ 503—528. Խմբ.

դուք մտաբերեք, վոր մենք Ռուսաստանի տնտեսա-
կարգը չենք քննել իբրև միասեռ ու բարձր զարգացում
ունեցող մի բան, այլ լիովին գիտակցել ենք, վոր
Ռուսաստանում սոցիալիստական ձևի կողքին ունենք
նահապետական հողագործություն, այսինքն՝ հողագոր-
ծության ամենանախնական մի ձև: Ուրեմն այսպիսի
պարագայում ի՞նչ դեր կարող է խաղալ պետական կա-
պիտալիզմը:

Այնուհետև յես ինձ հարց եմ տալիս. այս տար-
բերից վճռն է գերակշռող հանդիսանում: Պարզ է, վոր
մանր բուրժուական միջավայրում իշխում է մանր բուր-
ժուական տարրը, և յես այն ժամանակ գիտակցում
եյի, վոր մանր բուրժուական տարրը գերակշռում է,
այլ կերպ մտածել անհնարին էր: Այն հարցը, վոր յես
այն ժամանակ դնում եյի իմ առաջ, — այդ հատուկ մի
բանակովի ժամանակ էր, վոր չեր վերաբերում այժ-
մյան հարցին, — այս էր՝ ի՞նչպես ենք մենք վերա-
բերվում պետական կապիտալիզմին: Յեվ յես ինքս
ինձ պատասխանեցի. պետական կապիտալիզմը թեև
սոցիալիստական ձև էլ չէ, բայց մեզ համար և Ռու-
սաստանի համար ավելի նպաստավոր ձև կլիներ, քան
այժմյանն է: Այս ի՞նչ է նշանակում: Այս նշանակում
է, վոր մենք չեյինք գերադնահատում սոցիալիստական
տնտեսության վճի սաղմերը, վճի էլ սկզբունքները,
թեև մենք արդեն կատարել էյինք սոցիալիստական
հեղափոխություն. ընդհակառակն՝ մենք արդեն այն
ժամանակ վորոշ չափով գիտակցում էյինք, վոր ավե-
լի լավ կլիներ, յեթե մենք նախ հասնեյինք պետական
կապիտալիզմին, իսկ հետո արդեն — սոցիալիզմին:

Յես պետք է առանձնապես ընդգծեմ այս այն

պատճառով, վոր, կարծում եմ, միայն սրբնից յեխե-
լով, նախ՝ կարելի չէ բացատրել, թե ի՞նչ է այժմյան
տնտեսական քաղաքականությունը և յերկրորդ՝ սրա-
նից կարելի չէ կարևոր գործնական յեզրակա-
ցություններ հանել Կոմունիստական Ինտերնացիո-
նալի համար: Յես սրանով չեմ ուզում ասել, թե մենք
նախապես նահանջիլու պատրաստի պլան ունեյինք
արդեն: Այդպիսի բան չկար: Բանավեճի այս համառոտ
տողերը վճի մի դեպքում այն ժամանակ նահանջի
պլան չեյին: Մի շատ կարևոր կետի մասին, որինակ,
առևտրի ազատության մասին, վորը հիմնական նշա-
նակություն ունի պետական կապիտալիզմի համար,
այստեղ վճի մի բառ չկա: Յեվ այնուամենայնիվ, սը-
րանով արդեն տրված էր նահանջի ընդհանուր, անո-
րոշ գաղափարը: Յես կարծում եմ, վոր մենք այս
խնդրի վրա ուշադրություն պետք է դարձնենք վճի
միայն այն յերկրի տեսակետից, վորը իր տնտեսական
կառուցվածքով հետամնաց էր և մինչև այժմ՝ էլ հետա-
մնաց յերկիր է մնում, այլև Կոմունիստական Ինտեր-
նացիոնալի ու արևմտյան յեվրոպական առաջավոր
յերկրների տեսակետից էլ: Այժմ, որինակ, մենք զբաղ-
ված ենք ծրագրի մշակելով: Յես անձնապես կարծում
եմ, վոր ավելի ճիշտ կլիներ, վոր մենք այժմ բոլոր
ծրագրերը միայն քննության յենթարկեյինք ընդհան-
րապես, այսպես ասած, առաջին ընթերցումը կատա-
րեյինք և տայինք ապագեիլու, բայց վերջնական
վճիո հանեյինք վճի այժմ, վճի այս տարի: Ինչո՞ւ: Ա-
մենից առաջ, իհարկե, այն պատճառով, վոր մենք
հազիվ թե այս ծրագրերը լավ ենք լորրերգացում
յենթարկել: Իսկ այնուհետև նաև այն պատճառով, վոր
մենք համարյա բոլորովին չենք խորհել նախավոր նա-

հանջի ու այս նահանջն ապահովելու հարցի մասին՝
Իսկ այդ այնպիսի հարց է, վոր անպայման անհրա-
ժեշտ է ուշադրութեան անհել ամբողջ աշխարհի այն-
պիսի արմատական փոփոխութեանները ժամանակ,
ինչպես կապիտալիզմի տապալումն է և սոցիալիզմի
շինարարութեանը իր հսկայական դժվարութեան-
ներով: Մենք վոչ միայն պետք է գիտենանք, թե
ինչպես պետք է գործենք, յերբ մենք ուղղակի հար-
ձակման ենք անցնում և ընդամին հաղթում ենք: Հե-
ղափոխական ժամանակում այս այնքան էլ դժվար չե
արդեն, բայց այնքան էլ կարևոր չե, համենայն դեպս,
ամենամեծականն այս չե: Հեղափոխութեան ժամանակ
միշտ լինում են այնպիսի բոլորներ, յերբ հակառակոր-
դը կորցնում է գլուխը, և յեթե այն ժամանակ մենք
բոլոր ուժերով վրա տանք նրան, ապա կարող ենք
հեշտութեամբ հաղթել: Սակայն այս դեռ վոչինչ չի
նշանակում, վորովհետև մեր հակառակորդը, յեթե բա-
վականաչափ տոկոսնութեան ունի, կարող է նախորդ
ուժեր հավաքել և այլն: Նա հեշտութեամբ կարող է
մեզ պրովոկացիայի յենթարկել, վոր հարձակում գոր-
ծենք նրա վրա, և այնուհետև մեզ յերկար տարիներով
հետ շարտել: Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր այն
միտքը, թե մենք պետք է նահանջի հնարավորութեան
կանխապատրաստենք մեզ համար, շատ կարևոր նշա-
նակութեան ունի, և այն էլ վոչ միայն թեորիական
տեսակետից: Յե՛վ գործնական տեսակետից էլ՝ այն բո-
լոր կուսակցութեանները, վորոնք պատրաստվում են
մտախի ապագայում ուղղակի հարձակման անցնելու
կապիտալիզմի դեմ, պետք է այժմ մտածեն նույն-
պես, թե ինչպես պետք է ապահովեն իրենց նա-
հանջը: Յես կարծում եմ յեթե մեր հեղափոխութեան

փորձից ստացած մյուս բոլոր դասերի կողքին հաշվի
առնենք այս դասն էլ, ապա այս, իհարկե, մեզ վնչ մի
ֆլաս չի հասցնի, այլև, շատ հավանական է, շատ դեպ-
քերում ոգուտ կտա:

Այն բանից հետո, ինչ յես ընդգծեցի, թե ինչ-
պես 1918 թվականին արդեն մենք պետական կապի-
տալիզմը համարում եյինք վորպես նահանջի հնարա-
վոր գիծ, յես անցնում եմ մեր նոր տնտեսական քա-
ղաքականութեան հետևանքներին: Յես կրկնում եմ.
այն ժամանակ մի շատ անորոշ դադափար էր այս,
բայց 1921 թվին, այն բանից հետո, յերբ մենք հաղ-
թահարեցինք քաղաքացիական պատերազմի կարևո-
րույն հուսալը և հաղթահարեցինք հաշտութեամբ,
մենք դեմ առանք Խորհրդային Ռուսաստանի ներքին
քաղաքական մի մեծ և, իմ կարծիքով, ամենամեծ
կրիզիսին, վորը յերևան հանեց վոչ միայն գյուղա-
ցիութեան նշանակալից մասի, այլև բանվորների դժ-
գոհութեանը: Այս առաջին անգամն էր Խորհրդային
Ռուսաստանի պատմութեան մեջ, և հույս ունեմ վեր-
ջին անգամը կլինի, յերբ գյուղացիութեան մեծ մաս-
սանքը թեև վոչ գլխակցաբար, բայց բնազդորեն մեր
դեմ եյին տրամադրված: Ի՞նչն էր առաջ բերել այն-
յուրահատուկ և, հասկանալի յե, մեզ համար շատ ան-
հաճո զրուցութեանը: Պատճառն այն էր, վոր մենք մեր
տնտեսական հարձակման միջոցին չափազանց շատ
հեռու գնացինք՝ առանց բավարար բազա ապահովելու
մեզ համար, վոր մասսօներն զգացին այն, ինչ մենք
այն ժամանակ չեյինք կարողանում գլխակցաբար ձե-
վակերպել, վորը, սակայն, մենք էլ շուտով, մի քանի
շաբաթ հետո, խոստովանեցինք. այն է՝ վոր անմիջա-

պէս զուտ սոցիալիստական ձևերին, զուտ սոցիալիստական բաշխման անցնելը վեր ե մեր ուժերից, և վոր, յեթե մենք հնարավորութունն չունենանք նահանջելու այնպես, վոր ավելի հեշտ խնդիրներով սահմանափակվենք, ապա մեզ կորուստ ե սպառնում: Կրիդիսը, ինձ թվում ե, սկսվեց 1921 թվի փետրվարին: Հենց նույն տարվա գարնանն արդեն մենք միաձայն վորոշեցինք— այս օրթիվ մեծ տարածայնութուններ մեզ մոտ յես չեմ նկատել—անցնել նոր տնտեսական քաղաքականութայնը: Այժմ մեկուկես տարի անցնելուց հետո, 1922 թվի վերջին մենք արդեն կարող ենք մի քանի համեմատութուններ անել: Իսկ ի՞նչ տեղի ունեցավ: Մենք ի՞նչ ապրեցինք այդ ավելի քան 1 և կես տարվա ընթացքում: Ի՞նչ հետեանք ունեցավ: Արդյոք այս նահանջը մեզ ոգուտ ավից և իրժք մեզ փրկեց, թե հետեանքը դեռ անորոշ ե: Այս ե գլխավոր հարցը, վոր յես դնում եմ իմ առաջ: Յեվ յես կարծում եմ, վոր այս գլխավոր հարցն առաջնակարգ նշանակութուն ունի բոլոր կոմունիստական կուսակցութուններին համար ել, վորովհետե կեթե բացասական պատասխան տրվեր, ապա ամեն ինչ դատաբարտված կըլիներ կորստյան: Յես կարծում եմ, վոր մենք հանգիստ խղճով կարող ենք դրական պատասխան տալ այս հարցին, այսինքն՝ այն իմաստով, վոր անցած 1 և կես տարին դրականապես և բացարձակորեն ապացուցում ե, վոր մենք այս քննութունը հաջողութամբ ենք բռնել:

Յես կփորձեմ այժմ ապացուցել այս: Սրա համար յես պետք ե համառոտակի շոշափեմ մեր տնտեսութայն բոլոր բաղկացուցիչ մասերը:

Ամենից առաջ կանգ կառնեմ մեր Ֆինանսական սխտմի ու հոչակավոր ոուսական ոուրլու վրա: Յես կարծում եմ, վոր ոուսական ոուրլին կարելի յե հոչակավոր համարել թեկուզ հենց այն պատճառով, վոր այս ոուրլիները քանակը գերազանցում ե այժմ քվադրիլիոնից: Այս արդեն մի բան ե: Այս աստղաբաշխական թվանշան ե, և յես հավատացած եմ, վոր այստեղ շատերը չգրտեն, թե ի՞նչ ե ցույց տալիս այս թվանշանը: Սակայն մենք, այն ել տնտեսագիտութայն տեսակետից, այս թվերը չափազանց կարևոր չենք համարում արդեն, վորովհետե հերոնները կարելի յե ջընջել: Մենք արդեն մի քիչ ըմբռնել ենք այս արվեստը, վորը տնտեսական տեսակետից նույնպես ամենեին կարևոր չե: Յեվ յես համոզված եմ, վոր իրերի հետագա ընթացքում, մենք այս արվեստի մեջ ել ավելի մեծ առաջադիմութուններ կանենք: Իրապես կարևոր թ ոուրլու կայունացման հարցն ե: Այս հարցի վրա մենք աշխատում ենք, աշխատում են մեր լավագույն ուժերը, և այս խնդրին մենք վճռական տնտեսական նշանակութուն ենք տալիս: Յեթե մեզ հաջողվեց յերկար ժամանակով, իսկ հետագայում նաև ընդմիշտ կայունացնել այս ոուրլին, նշանակում ե՝ տարել ենք: Այն ժամանակ այս բոլոր աստղաբաշխական թվանշանները, այս բոլոր տրիլիոններն ու քվադրիլիոնները վոչինչ են: Այն ժամանակ մենք կկարողանանք մեր տնտեսութունն ամուր հիմքերի վրա դնել ու հաստատապես առաջ տանել: Յես կարծում եմ, վոր կարող եմ այս հարցի օրթիվ բավական կարևոր ու վճռական փաստեր բերել ձեզ: 1921 թվականին թղթե ոուրլու կուրսի կայունութայն ժամանակաշրջանը յերեք ամ-

սից ել քիչ եր տևում: Ընթացիկ 1922 թվականին, թեև այն դեռ չի յել վերջացել, այս ժամանակաշրջանը տևել է 5 ամսից ավելի: Յես կարծում եմ, վոր այս արդեն բավական է: Ի հարկե, այս բավական չէ, յիթե գուր մեզնից գիտական ապացույց եք ուզում այն մասին, թե մենք ապագայում լիովին կլուծենք այս խնդիրը: Սակայն, իմ կարծիքով, ընդհանրապես անհնարին է այս ապացուցել ամբողջովին ու լիովին: Այն թվերը, վոր յես հաղորդեցի ձեզ, ցույց են տալիս, թե անցյալ տարվանից, յերբ մենք սկսել ենք նոր տնտեսական քաղաքականությունը, մինչև այստրվա որը, մենք արդեն սովորել ենք առաջ գնալ: Յեթե մենք այս սովորեցինք, ապա վստահ եմ, վոր կսովորենք այսուհետև ել հետագա հաջողությունների հասնել այս ճանապարհի վրա, յիթե միայն վորևե առանձին հիմարություն չանենք: Սակայն ամենակարևորն առևտուրն է, հենց ապրանքային շրջանառությունը, վորն անհրաժեշտ է մեզ: Յեվ յիթե կարողացանք կարգավորել այս խնդիրը յերկու տարվա ընթացքում, չնայած վոր պատերազմի մեջ էյինք (վորովհետև, ինչպես ձեզ հայտնի յն, Վլադիվաստոկը գրավված է ընդամենը սրանից մի քանի շաբաթ առաջ), չնայած վոր մենք միայն այժմ կարող ենք ըսկրել մեր տնտեսական գործունեյությունը լիովին սխտեմատիկ կերպով վարել, — յիթե մենք, այնուամենայնիվ, հասանք այն բանին, վոր թղթե ուրբու կայունության ժամանակաշրջանը յերեք ամսից բարձրացավ հինգ ամսի, ապա, յես կարծում եմ, վոր համարձակ կարող եմ ասել, վոր կարող ենք սրանով գոհ լինել: Չե՛ վոր մենք մենակ ենք: Մենք վոչ մի փո-

խառություն չենք ստացել և չենք ստանում: Կապիտալիստական հղոր պետություններից և վոչ մեկը, վորոնք այնպես «փայլուն կերպով» կազմակերպում են իրենց կապիտալիստական տնտեսությունը, վոր մինչև այժմ ել չգիտեն թե դեպ ուր են դիմում, նրանցից վոչ մեկը մեզ չոգնեց: Վերսայլի հաշտությունը նրանք այնպիսի ֆինանսական սխտեմ են ստեղծել, վորից իրենք ել գլուխ չեն հանում: Յեթե կապիտալիստական այս մեծ պետություններն այսպես են տնտեսություն վարում, ապա յես կարծում եմ, վոր մենք, հետամնացներս ու անկիրթներս, այնուամենայնիվ կարող ենք գոհ լինել, վոր հասել ենք ամենակարևորին — հասել ենք ուրբու կայունացման պայմաններին: Այս ապացուցվում է վոչ թե տեսական վորևե վերլուծությամբ, այլ պրակտիկայի միջոցով, և այս պրակտիկան, յես կարծում եմ, ավելի կարևոր է, քան բոլոր տեսական դիսկուսիաները աշխարհում: Պրակտիկան է հենց, վոր ցույց է տալիս, թե մենք այստեղ վճռական հետեվանքների յենք հասել, այն է՝ սկսում ենք տնտեսությունը շարժել ուրբու կայունացման ուղղությամբ, իսկ այս ամենամեծ նշանակությունն ունի առևտրի համար, ազատ ապրանքաշրջանառության համար, գյուղացիների համար ու մանր արտադրողների հոծ մասսայի համար:

Այժմ յես անցնում եմ մեր սոցիալական նպատակներին: Ամենագլխավորն, ի հարկե, գյուղացիությունն է: 1921 թվին անպայման գոյություն ունեք գյուղացիության հսկա մասի դժգոհություն: Այնուհետև սով յեղավ մեզնում: Յեվ գյուղացիության համար ամենաձանր փորձություն եր նշանակում. այս:

Յեվ միանգամայն բնական է, վոր տմբողջ արտասահմանն աղաղակում եր այն ժամանակ. «Ա՛յ, նայեցե՛ք, ահա սոցիալիստական եկոնոմիկայի հետևանքները»: Լիովին բնական է, ի հարկէ, վոր ամբողջ արտասահմանը լուծւում եր այն մասին, վոր սոֆի իրապես քաղաքացիական պատերազմի հրեշավոր հետևանքն է: Բորը կալվածատերերն ու կապիտալիստները, վորոնք 1918 թվին հարձակվել էյին մեզ վրա, գործն այնպես էյին պատկերացնում, վոր իբրև թէ սովը սոցիալիստական եկոնոմիկայի հետևանքն է: Սովը մեծ ու լուրջ դժբախտություն էր իրապես, այնպիսի դժբախտություն, վոր սպառնում եր մեր ամբողջ կազմակերպչական ու հեղափոխական աշխատանքը վոչնչացնել:

Ուրեմն, յես հարց եմ տալիս այժմ. այն անսպասելի ու նմանը չեղած աղետից հետո ի՞նչ դրության մեջ է այժմ գործը, այն բանից հետո, յերբ մտքերի ենք նոր տնտեսական քաղաքականությունը, այն բանից հետո, յերբ գյուղացիներին առևտրի ազատություն ենք տվել: Պատասխանը պարզ է և բոլորի աչքի առջև: Գյուղացիությունը մի տարվա ընթացքում վնչ միայն հաղթահարեց սովը, այլև պարենահարկ տվեց այնպիսի քանակությամբ, վոր մենք այժմ արդեն հարյուր միլիոնավոր փութ ենք ստացել և այն էլ համարյա առանց վորևէ հարկադրանքի միջոցներ կիրառելու: Գյուղացիական ապստամբությունները, վորոնք առաջ, մինչև 1921 թիվը, այսպես ասած, վորոշում էյին Ռուսաստանի ընդհանուր պատկերը, համարյա բոլորովին չքացել են: Գյուղացիությունը գոհ է իր այժմյան վիճակից: Այս մենք կարող ենք հանդիստ կերպով հաստատել: Մենք կարծում ենք, վոր

այս ապացույցներն ավելի կարևոր են, քան վորևէ վիճակագրական ապացույց: Վոր գյուղացիությունը մեղմում վճռական գործոն է, այս մասին վոչ վրք չի կասկածում: Այս գյուղացիությունն այժմ այնպիսի դրության մեջ է, վոր մենք հարկ չունենք յերկյուղ կրելու, թէ նրա կողմից վորևէ շարժում կլինի մեր դեմ: Մենք այս տուժ ենք լիակատար գիտակցությամբ, առանց չափազանցության: Մենք արդեն հասել ենք սրան: Գյուղացիությունը կարող է մեր իշխանության գործունեյության այս կամ այն կողմից դժգոհ լինել, նա կարող է գանգատվել: Այս, իհարկէ, հնարավոր է և անխուսափելի, վորովհետև մեր ապարատն ու մեր պետական տնտեսությունը դեռ չափազանց վատ են՝ այս բանի առաջն առնելու համար, սակայն, վոր ամբողջ գյուղացիության կողմից վորևէ լուրջ դժգոհություն լինի մեր դեմ, այս բանի հնարավորությունը, համենայն դեպս, միանգամայն վերջաված է: Այս բանին վենք հասել ենք մի տարվա ընթացքում: Յես կարծում եմ, վոր այս շատ մեծ բան է:

Այնուհետև անցնում եմ թեթև արդյունաբերությանը: Մենք պետք է տարբերություն ընենք մեր ծանր ու թեթև արդյունաբերության մեջ, վորովհետև սրանք տարբեր դրության մեջ են գտնվում: Ինչ վերաբերում է թեթև արդյունաբերությանը, ապա յես կարող եմ հանդիստ ասել. այստեղ ընդհանուր վերելք է նկատվում: Յես մանրամասնությունների մեջ չեմ մտնի: Յես նպատակ չունեմ վիճակագրական տվյալներ մեջ բերել, սակայն այս ընդհանուր ապավորությունը հիմնված է փաստերի վրա, և յես կարող եմ յերաշխավորել, վոր սրա հիմքում վոչ մի սխալ կամ

պարատը: Հետագայում յես դեռ մի քանի խոսք ել ասելու յեմ մեր պիտական ապարատի մասին: Համեմենայն դեպս՝ մենք պետք է այս ապարատը կրճատենք, պետք է տնտեսենք, վորքան միայն հնարավոր է: Մենք տնտեսում ենք ամեն ինչից, նույնիսկ դեպրոցներից: Վորովհետև մենք զիտենք, վոր առանց ծանրը արդյունաբերությունը փրկելու, առանց վերջինս վերականգնելու, չենք կարող վոչ մի արդյունաբերություն կառուցել: Իսկ առանց ծանր արդյունաբերության՝ մենք ընդհանրապես կկորչենք իբրև ինքնուրույն յերկիր: Այս մենք լավ գիտենք:

Ռուսաստանի համար փրկություն է վոչ միայն գյուղացիական տնտեսություն լավ բերքը,—այս դեռ քիչ է,—վոչ միայն լավ դրությունը թեթև արդյունաբերություն, վորը գյուղացիությունը սպառման առարկաներ է մատակարարում,—այս էլ դեռ քիչ է,—մեղ անհրաժեշտ է նաև ծանր ինդուստրիան: Իսկ ծանրը արդյունաբերությունը լավ դրության հասցնելու համար շատ տարիների աշխատանք է պահանջվում:

Ծանր ինդուստրիան պետական սուբսիդիաների կարիք ունի: Յեթե մեզնում այս սուբսիդիաները չը ձարվին, ապա մենք կորած ենք իբրև քաղաքակրթված պետություն, ել չեմ ասում դեռ իբրև սոցիալիստական պետություն: Յեվ այսպես այս տեսակետից վճռական քայլ ենք արել: Այն է՝ սկսել ենք կուտակել միջոցներ, վորոնք անհրաժեշտ են ծանր ինդուստրիան վտարի հանելու համար: Այն գումարը, վոր մենք մինչև այժմ ձեռք ենք բերել, ճիշտ է, հաղիվ է անցնում քսան միլիոն վոսկի ուրբուլց, սակայն, համենայն դեպս, այս գումարը կա, և այն հատկացվում է

միայն նրա համար, վոր մեր ծանր ինդուստրիան բարձրացնենք:

Յես կարծում եմ, վոր ինչպես խոստացել էյի, ընդհանուր առմամբ համառոտակի բացատրեցի մեր ժողովրդական տնտեսության գլխավոր տարրերը, և ինձ թվում է, թե այս բոլորից կարելի յե յեզրակացնել, վոր նոր տնտեսական քաղաքականությունը հենց այժմ արդեն պլյուս է ավել: Հենց այժմ արդեն ապացույց ունենք, վոր իբրև պետություն կարող ենք առևտուր անել, գյուղատնտեսության ու արդյունաբերության ամենից ուժեղ դիրքերը մեր ձեռքում պահել և առաջ գնալ: Պրակտիկ գործունեությունն ապացուցել է այս: Յես կարծում եմ, վոր առայժմ այս մեղ բավական է: Մենք դեռ շատ բան ենք սովորելու և մենք ըմբռնել ենք, վոր մեղ դեռ անհրաժեշտ է սովորել: Հինգ տարի յե, վոր իշխանությունը պահում ենք մի քանի ձեռքին և այն էլ այս բոլոր հինգ տարիների ընթացքում մենք պատերազմի վիճակում ենք գրտնրվել: Նշանակում է՝ մենք հաջողություն ունեցել ենք:

Այս հասկանալի յե, վորովհետև գյուղացիությունը մեր կողմն էր: Դժվար է ավելի շատ մեր կողմը լինել, քան յեղել և գյուղացիությունը: Նա հասկանում էր, վոր սպիտակների թիկունքում կանգնած են կալվածատերերը, վորոնց ինքն ամենից ավելի յե ատում աշխարհիս յերեսին: Այս պատճառով էլ գյուղացիությունն ամբողջ խանդավառությունը, ամբողջ անձնավիբությունը մեր կողմն էր բռնում: Դժվար չեր հասնել այն բանին, վոր գյուղացիությունը մեղ սպիտակներից պաշտպաներ: Գյուղացիները, վորոնք առաջ ա-

տում եյին պատերազմը, ամեն հնարավոր բան անում
եյին սպիտակներէ դեմ մղվող կովի համար, կավա-
ծատերերէ դեմ մղվող քաղաքացիական պատերազմի
համար: Այնուամենայնիվ այս դեռ բոլորը չեք, վորով-
հետեւ եյապես այստեղ խնդիրը վերաբերում եր այն
բանին, թե արդո՞ք իշխանութիւնը կավածատերերի
ձեռքին կմնա, թե՞ գյուղացիներէ ձեռքին: Մեզ համար
այս բավական չեք: Գյուղացիները հասկանում են,
վոր մենք իշխանութիւնը բանվորներէ համար ենք
խել և մեր նպատակն է այս իշխանութիւն վրա հեն-
վելով՝ սոցիալիստական հասարակարգ ստեղծել: Ուս-
տի և մեզ համար ամենից ավելի կարևոր է սոցիալիս-
տական տնտեսութիւն տնտեսական նախապատրաս-
տումը: Մենք չկարողացանք ուղիղ ձանապարհով նա-
խապատրաստել սոցիալիստական տնտեսութիւնը,
մենք հարկադրված յեղանք զարտուղի ձանապարհնե-
րով այս անելու: Պետական կապիտալիզմը, ինչպես
վոր մենք այս սահմանել ենք մեզնում, յուրահատուկ
պետական կապիտալիզմ է: Վերջինս չի համապատաս-
խանում պետական կապիտալիզմի սովորական հասկա-
ցողութեանը: Բոլոր հրամանատարական բարձունքնե-
րը մեր ձեռքին են գտնվում, մեր ձեռքին է հողը, այս
պատկանում է պետութեանը: Այս շատ կարևոր է,
թեև մեր հակառակորդները գործն այնպես են պատ-
կերացնում, վոր իբրև թե այս վոչ մի նշանակութիւն
չունի: Դա սխալ է: Այն հանգամանքը, վոր հողը պե-
տութեանն է պատկանում, չափազանց կարևոր է և մեծ
գործնական նշանակութիւն ունի նաև տնտեսական
տեսակետից: Մենք սրան հասել ենք, և յես պետք է
ասեմ, վոր մեր հետագա ամբողջ գործունէութիւնն

ել պետք է զարգանա միայն այս շրջանակներում:
Մենք արդեն հասել ենք այն բանին, վոր մեր գյու-
ղացիութիւնը գոհ է, վոր արդյունաբերութիւնն աշ-
խուժանում է և վոր առևտուրը կենդանանում է:
Յես արդեն ասացի, վոր մեր պետական կապիտալիզմը
տարբերվում է տառացի հասկացված պետական կա-
պիտալիզմից նրանով, վոր մեր պրոլետարական պե-
տութեան ձեռքին են գտնվում վոչ միայն հողը, այլև
արդյունաբերութեան բոլոր կարևորագույն մասերը
Ամենից առաջ մենք կապալով ենք տվել մանր ու մի-
ջին ինդուստրիայի վորոշ մասը միայն, իսկ մնացածն
ամբողջութեամբ գտնվում է մեր ձեռքին: Ինչ վերա-
բերում է առևտրին, յես ուզում եմ դարձյալ ընդգծել,
վոր մենք աշխատում ենք խառն ընկերութիւններ
հիմնել, վոր մենք արդեն հիմնում ենք այն, այսինքն՝
ընկերութիւններ, վորտեղ կապիտալի մի մասը պատ-
կանում է մասնավոր կապիտալիստներին, այն էլ
ոտաբերկրացի կապիտալիստներին, իսկ մյուս մա-
սը՝ մեզ: Նախ՝ այսպիսով սովորում ենք առևտուր ա-
նել, իսկ այս անհրաժեշտ է մեզ, և յերկրորդ՝ այն
դեպքում, յեթե այս անհրաժեշտ համարենք, մենք
միշտ հնարավորութիւն ունենք լուծարել յենթարկե-
լու այսպիսի ընկերութիւնը, այնպես վոր, այսպես
ասած, վոչ մի բանով ուրիշ չենք անում: Մասնավոր
կապիտալիստից սովորում ենք և ուշի ուշով տեսնում,
թե ինչպես պետք է առաջ զնանք և թե ինչ սխալներ
ենք անում: Ինչ թվում է, վոր յես կարող եմ սահմա-
նափակվել սրանով:

Յես կուզենայի շոշափել մի քանի աննշան կե-
տեր էլ: Անկասկած է, վոր մենք անադին չափով հի-

կըսել սովորել, բայց սովորում ենք այնպես սխառ-
մատիկորեն, վոր վստահ ենք, թե լավ հետևանքների
կհասնենք: Սակայն յեթե մեր հակառակորդները,
այսինքն կապիտալիստներն ու Ս ինտերնացիոնալի
հերոսներն ընդգծում են մեր կատարած հիմարություն-
ները, ապա յես ինձ թույլ եմ տալիս համեմատու-
թյան համար այստեղ մեջ բերել մի հուշակավոր ուսու-
նողինակի խոսքերը: Այս որինակը յես մի քիչ կփոփո-
խեմ, այն ժամանակ այն կստանա այս կերպարանքը.
յեթե բողջակիները հիմարություններ են անում, ապա
բողջակին ասում ե. «Յերկու անգամ յերկու—կանի 5»:
Իսկ յեթե նրա հակառակորդները, այսինքն կապիտա-
լիստներն ու Ս ինտերնացիոնալի հերոսները հիմար-
ություններ են անում, ապա նրանք ստանում են
«յերկու անգամ յերկու—կանի ճրագուի մոմ»¹⁶⁴),
Դժվար չե այս ապացուցել: Առեք, որինակ, այն դա-
շինքը, վոր Կոլչակի հետ կնքել են Ամերիկան, Ան-
գլիան, Ֆրանսիան, Յապոնիան: Յես ձեզ հարց եմ
տալիս. կան արդոք աշխարհումս ել ավելի լուսավոր-
ված ու հզոր պետություններ: Յեվ ինչ ստացվեց:
Նրանք Կոլչակին ոգնություն խոստացան՝ առանց հաշ-
վի առնելու, առանց մտածելու, առանց դիտելու: Այս
մի Ֆրիսակո յեր, վորն ըստիս՝ դժվար ե նույնիսկ ըմ-
բռնել մարդկային մտածողության տեսակետից:

Կամ մի ուրիշ որինակ, վոր ավելի մոտ ե և ա-
վելի կարևոր—Վերսալի հաշտությունը: Յես հարցնում
եմ ձեզ. ինչ արին այստեղ «փառքով պսակված»,
«մեծ» պետությունները: Ինչպես կարող են նրանք
այս քառսից ու անմտությունից մի յեղք գտնել: Յես
կարծում եմ, վոր չափազանցություն չի լինի, յեթե

կրկնեմ, թե մեր հիմարությունները դեռ վոչինչ են
այն հիմարությունների հետ համեմատած, վոր կատա-
րում են միասին կապիտալիստական պետություննե-
րը, կապիտալիստական աշխարհն ու Ս ինտերնացիո-
նալը: Ուստի, կարծում եմ, թե համաշխարհային հե-
ղափոխության հեռանկարները բարենպաստ են—մի
թեմա, վոր պետք ե համառոտակի շոշափեմ: Յեվ,
յես կարծում եմ, այս հեռանկարները մի վորոշ պայ-
մանում ել ավելի կլավանան: Այս պայմանների մա-
սին կկամենայի մի քանի խոսք ասել:

1921 թվին Ս Ս կոնգրեսում մենք մի բանաձև
ընդունեցինք կոմունիստական կուսակցությունների
կազմակերպչական կառուցման մասին և նրանց աշ-
խատանքի մեթոդների ու բովանդակության մասին:
Բանաձևը գեղեցիկ ե, բայց համարյա ամբողջովին
ոռուսական ե, այսինքն՝ ամեն ինչ վերցրած ե ոռուսա-
կան պայմաններից: Այս նրա դրական, բայց և բա-
ցասական կողմն ե: Բացասական այն պատճառով,
վոր, համոզված եմ, համարյա վնչ մի ոտաբերկրացի
այն չի կարող կարդալ,—յես այդ բանաձևը նորից
կարդացել եմ այս ասելուց առաջ: Նախ՝ բանաձևը
չափազանց յերկար ե, ունի 50 կամ ավելի պարա-
գրաֆ: Ոտաբերկրացիները սովորաբար այսպիսի բա-
ները չեն կարդում: Յերկրորդ՝ յեթե նրանք նույնիսկ
կարդան, ապա նրանցից վոչ վոք բանաձևը չի ըմբռնի
հենց այն պատճառով, վոր այն չափազանց ոռուսական
ե: Չեն հասկանա վնչ թե այն պատճառով, վոր ոռու-
սերեն ե գրված,—բանաձևը շատ գեղեցիկ թարգման-
ված ե բոլոր լեզուներով,—այլ վոր ամբողջովին տո-
գորված ե ոռուսական վոգով: Յեվ յերրորդ՝ յեթե իբրև

բացառութիւն, վորեւ ոտարեկրացի ըմբռնի բանա-
ձևը, ապա չի կարողանալու այն իրագործել: Այս նրա
յերրորդ թերութիւնն է: Յես զրուցել եմ այստեղ յե-
ղած մի քանի պատվիրակների հետ և հույս ունեմ
կոնգրեսի հետագա ընթացքում, թեև անձամբ չեմ կա-
րող մասնակցել նրան,—այս դժբախտաբար ինձ հա-
մար անհնար է,—ավելի մանրամասն խոսելու զանա-
զան յերկրներից յեկած պատվիրակների ավելի մեծ
թվի հետ: Յես այն տպավորութիւնն ստացա, վոր
այս բանաձևով մեծ սխալ ենք կատարել, վոր ինք-
ներս մեր հետագա հաջողութիւնն ճանապարհը խափա-
նել ենք: Ինչպես արդեն ասացի, բանաձևը գեղեցիկ է
կազմված, յես ստորագրում եմ նրա բոլոր 50 ու ա-
վելի պարագրաֆների տակ: Սակայն մենք չենք ըմ-
բռնել, թե ինչպես պետք է մոտենալ ոտարեկրացի-
ներին մեր ոռուսական փորձով: Այն բոլորը, ինչ վոր
ասված է բանաձևում, մեռած տառ է մնացել: Բայց
յեթե մենք այս չհասկանանք, չենք կարողանա տեղ-
ներիցս առաջ շարժվել: Յես կարծում եմ, վոր մեզ
բոլորիս համար, ինչպես ոռուսական, այնպես և ոտար-
յերկրացի ընկերների համար, ամենակարևորն այն է,
վոր մենք, ոռուսական հեղափոխութիւնն հինգ տարի-
ներից հետո, պետք է սովորենք: Այժմ մենք նոր-նոր
ենք միայն հնարավորութիւնն ստացել սովորելու: Յես
չգիտեմ, թե այս հնարավորութիւնը վճռեան յերկար
կշարունակվի: Յես չգիտեմ, թե կազդիտալիստական
պետութիւնները վճռեան յերկար ժամանակ մեզ հնա-
րավորութիւն կտան հանգիստ սովորելու: Սակայն
նազմական գործունեյութիւնից, պատերազմից ազատ

յուրաքանչյուր մոմենտ մենք պետք է ոգտագործենք
սովորելու համար:

Ամբողջ կուսակցութիւնն ու Ռուսաստանի բոլոր
շերտերն այս ապացուցում են սովորելու իրենց բուն
տենչով: Սովորելու այս ձգտումը ցույց է տալիս, վոր
մեզ համար այժմ ամենակարևոր խնդիրն է սովորել
ու սովորել: Բայց պետք է սովորեն նմանապես ոտար-
յերկրյա ընկերներն ել: Վնչ այն իմաստով, ինչպես
մենք ենք սովորում, այսինքն՝ կարգալ, գրել ու կար-
դացածը հասկանալ, վորի կարիքը մենք դեռ զգում
ենք: Վիճում են այն մասին, թե այս պրոլետարա-
կան, թե բուրժուական կուլտուրային է վերաբերում:
Յես այս հարցը թողնում եմ բաց: Համենայն դեպս՝
անկասկած է, վոր մեզ անհրաժեշտ է, վոր մենք ա-
մենից առաջ սովորենք կարգալ, գրել ու կարդացածը
հասկանալ: Ոտարեկրացիներին հարկավոր չէ այս:
Նրանց հարկավոր է արդեն մի ավելի բարձր բան.
սրա մեջ է մտնում ամենից առաջ նաև այն, վոր նը-
րանք նույնպես ըմբռնելին, ինչ մենք գրել ենք կո-
մունիստական կուսակցութիւնների կազմակերպչա-
կան կառուցման մասին, և ինչ ոտարեկրացի ըն-
կերներն ստորագրել են առանց կարգալու ու առանց
հասկանալու: Նրանց առաջին խնդիրն այս պետք է
լինի: Անհրաժեշտ է այս բանաձևն իրագործել: Այս
չի կարելի կատարել մեկ գիշերվա մեջ, այս բացար-
ձակապես անկարելի յի: Բանաձևն անչափ ոռուսական
է, այն արտացոլում է Ռուսաստանի փորձը, ուստի և
միանգամայն անըմբռնելի յի ոտարեկրացիների հա-
մար, և սրանք չեն կարող բավականանալ նրանով,
վոր բանաձևը կախ տան անկյունից իբրև սրբապատ-

այ 11/11/22

կեր և ազդեցն նրա առաջ: Սրանով վնչ մի բանի հաս-
նել չի կարելի: Նրանք պետք է յուրացնեն ուսական
փորձի մի խոշոր մասը: Ինչպես կկատարվի այս, այդ
յես չգիտեմ: Թերևս մեզ մեծ ծառայություններ կմա-
տուցեն, որինակ, Իտալիայի ֆաշիստները նրանով,
վոր խտրացիներին կբացատրեն, թե նրանք դեռ բա-
վականաչափ լուսավորված չեն, և թե նրանց յերկիրը
դեռ ապահովագրված չեն սև հարյուրյակից: Թերևս այս
շատ ոգտակար կլինի: Մենք ուսաներս, նույնպես
պետք է մի քիչ փորձ անենք ոտարերկրացիներին
բացատրելու այս բանաձևի հիմքերը: Այլապես նրանք
ի վիճակի չեն լինի այս բանաձևն իրագործելու: Յես
համոզված եմ, վոր սրա նկատմամբ մենք պետք է վնչ
միայն ուսական, այլև ոտարերկրացի ընկերներին
ասենք, վոր այժմ վերահաս ժամանակաշրջանում ա-
մենակարևորը սովորելն է: Մենք սովորում են ընդ-
հանուր իմաստով: Իսկ նրանք պարտական են սովո-
րելու հատուկ իմաստով, վորպեսզի կարողանան ըմ-
բռնել և յուրացնել հեղափոխական աշխատանքի կազ-
մակերպությունը, կառուցումը, մեթոդն ու բովանդա-
կությունը: Յեթե այս իրագործվի, այն ժամանակ,
յես համոզված եմ, համաշխարհային հեղափոխության
հեռանկարները վոչ միայն լավ, այլև զերազանց կլի-
նեն:

„Бюллетень IV конгресса Коммунистического Интер-
национала“ (Русское издание) № 8, 16 ноября 1922 г.

Ուսանողները սովորված է ըստ „Бюллетень“ ի տեքստի,
վոր ուղղված է սղաղության գերմաներեն բնագրի հա-
մաձայն, սրբագրված կենի՛ն, իրեն ձեռքով:



